*ԴԱՐԱԲԱՍ գյուղի սահմաններում հնում եղել են նաև հետևյալ արձանագրությունները, որոնք այժմ չկան.*

**336. ս. ԱԾԱԾՆԻ** *հյուսիսային պատին ներսից.*

Ցուսով ամենակալին Աստուծոյ ես Տարսայիճս իշխանաց իշխան որդի մեծին Լիպարտին, եւ ամուսին իմ Մինախաթուն դուստր մեծին Դալին, կոլմնակալ յայսմ նահանգի՝ զոր ես մեզ Ած ի Բարկուշատայ մինչ ի դուռն Դվնայ, շինեցաք Ածածինս ի հալալ արդեանց մերոց ի փրկութիւն հոգւոյ և յերկարութիւն կենաց մերոց. տուաք ի պէտս սպասաւորաց Սունակայ տափին հողն, նահատակին հողն, և ներքի ծաղկոցն ի Շնհեր, ի Տաթևայ լուսազին. և կատարի ի տարին :Ժ: ժամ. :Ե: յայտնութեան :Ե: զատկին, վասն ինձ Տարսայիճիս և Մինայխաթունին. եթէ ոք ի մերոց կամ յաւտարաց խափանեսցէ զսահմանեալս մեր, :ՅԺԸ: հայրապետաց նզոված է, թուին :ՉԻԱ:

*Վերցնում ենք Շահխաթունյանից, Բ. 364.*
*Տե՛ս նաև Լալայան, Ազգ. հանդ. Գ. 165,*

**337.** *վերոհիշյալից ներքև.*

Շնորհօքն Այ Նուռզեցի զԱծածինս :ՌՃԻԶ: թվին, վերակացութեամբ
Տէր Մարտիրոսին և տէր Գևորգին տէր Եփրեմին

*Լալայան, Գ. 165*

**338. ս. ԱԾԱԾԻՆ** *եկեղեցու հյուսիսում մի գերեզմանաքարի վրա.*

Այս է հանգիստ գե(ղեցիկ) մանկան պրն Սմպատին իշեցէք ի Քս. թվ. :ՉԽԳ:

*Լալայան, Գ. 165*

**439. ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ** *մեջ մի խաչքարի վրա.*

Ես թագվոր Խէրան Սուլթան կանգնեցի խաչս փրկութիւն
հոգւոյն մերում. թվին :ՉԽԴ:

*Լալայան. Ազգ. հանդ. Գ. 165*

## ԲՆՈՒՆԻՍ

*Գտնվում է այժմ Սիսիանի շրջանի մեջ. հնում եղել է Ծղուկ գավառի մեջ և համաձայն իր վճարած հարկի քանակի (6 չափ)՝, եղել է ամենափոքր գյուղերից մեկը։*

*Գյուղի հնագույն հիշատակությունը 906 թ. է, երբ Սյունյաց գահերեց իշխան Աշոտը նվիրում է այն Տաթևի վանքին։*

*Այս գյուղի նշանավոր հուշարձանը մի կոթող—խաչքար է, կանգնած գյուղի հյուսիսում գտնվող գերեզմանաաան մեջ. արևմտյան երեսին ագուցված խաչքարի վրա և շրջանակնե-րին չորս արձանագրություն են փորագրված և մնացած մասերը գեղեցիկ քանդակներ, իսկ արևելյան երեսին եղել են առյուծի և վագրի բարձրաքանդակներ, որոնց ոտքերի տակ մի կաքավ։*

*1931 թ. երկրաշարժի հետևանքով հուշարձանի վերին, հարավային և ներքին մասերը վնասվել են։ Փլած ռեկորներից վադրի և կաքավի բարձրաքանդակները, ինչպես և կողքի շրջանակի մի երկարավուն արձանագրված քար տարվել են Սիսիան և պահվում են եկեղեցու մեջ։*

*Այս կոթողի երեսպատման քարերից պետք լինի նաև հուշարձանի մոտ, հյուսիս-արևմըտյան կողմում, որպես գերեզմանաքար օգտագործված քարը «Բաջ վարպետ Գրգորիկի» արձանագրությամբ, որն անշուշտ հուշարձանը կառուցող ճարտարապետն է եղել։*

*Կոթող-խաչքարի շուրջը կան 16—17 դարերի գերեզմանաքարեր։*

*Գյուղի հյուսիսային եզրին կան մի ավերակ եկեղեցու մնացորդներ, որոնց մոտ կա նաև մի կանգուն եկեղեցի, որի պատերի մեջ օգտագործված են 14-րդ դարի խաչքարեր։*

***340—343. ԲՆՈՒՆԻՍ. կոթող-խաչքարի վրա. չորս արձանագրություն.***



340. ՊԱՊ, ՍԻՄՈՆ ՅԻՇԵՑԷՔ ՔՍ:

341. ՏՊ. ԱՅԼՔ ՅԻՇԵՑԷՔ ՔՍ. Ի ԹՎ. ։ՉՉ։

342. ԵՐԿՐՊԱԳՈՂՔ ԱԾԸՆԿԱԼ ՍԲ ԽԱՉԻՍ ԽՆԴՐԵՄՔ Ի ՁԵՆՋ ՄԵՔ Ս[ԱՐ]ՏԻՐՈՍ, ՎԱՆԵՆԻ ՎԱՍՆ ՔԱՂՑՐ ԵՒ ԱՆՈՒՇԱՏԵՍ, ԱՐԵԳԱԿՆԱՆՄԱՆ ԵՒ ԾԱՂԿԱՏԵՍԻԼ

ՋԱԽԱԿԻՆ ՄԵՐ ԱԻՐՊԷԼԻՆ, ՈՐ ԷՐ ԱԾԱԻՆ ՇՆՈՐՀԱԻՔՆ ԼՑԵԼ ԱՑՆՉԱՓ, ՈՐԻ ԿԷՍ ՏԱՐՈՋՆ ԶՀԱՑ ԴԻՐՍ ԵՒ Ի ՄԻ ԱՄՍՈՋՆ ԶՄՈԻԴԱԼԻՆ ՈԻՍԵԼ. ԶՏԵՍՈՂՍՆ ԻԻՐ ԶԱՄԷՆ ԶԱՐՄԱՑԱՆԷՐ ԵՒ Ի ՍԷՐՆ ԻՐ ՈՐԴՈՐԷՐ. ԱՄԵՆԻՑՈԻՆ ԼԻՆԷՐ ՍԻՐԵԼԻ, ՊԻՏԱՆԻ ՊԱՐՈՆԱՑ ՇԻՆԱԿՆԱՑ. ԱԾՍԻՐԱԲԱՐ ԿԻՍԱԻՐԵԱՑ ՓՈԽԵԼ ԱՇԽԱՐՀԵ ԸՆԴ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԼՈԻՍՈՑ ԹՈՂԵԼ ՄԵԶ ԴԱՌՆ ԿՍԿԻԾ, ԱՆՄԽԻԹԱՐ ՍՈԻԳ, ՑԻՇԱՏԱԿ ՏԵՍՈՂԱՑ ԻԻՐ ԱՂԱՉԵՄՔ ԶՁԵԶ ՅԻՇԵԼ ԶՈՐԴԻՆ ՄԵՐ ԶԱԻՐԲԷԼՆ
ԵՒ ԶԱՆՄԽԻԹԱՐ ԾՆՈՂՔՍ։

343. ԶԽՈՌՆ ՅԻՇԵՑԵՔ Ի ՔՍ։

*Արձանագրության աջ կողմի կարճատող մասը գտնվելիս է եղել խաչքար-կոթողի հարավային շրջանակին։ 1931 թ. երկրաշարժի ժամանակ ընկել է. այժմ գտնվում է Սյունի վանքի ներսում (Սիսիան)։*

*Մեծ արձանագրության սկզբից և վերջից Ալիշանն ունի մի հավելյալ նախադասություն. սկզբից՝ «Այս է արձանագիր մեծի իշխանիս Օրբելի, որ գրեցաւ ի վերայ շիրմի իմոյ» և վերջից՝ «Այս եղև ի թագաւորութեանն Հայոց ՁԽ յամսեանն յուլիսի ԺԱ-ին»։*

*Ինչպես մեր գծագրությունը և լուսանկարը ցույց են տալիս արձանագրության սկզբի մասում ոչ մի հավելյալ տեղ չկա այդ նախադասության համար։ Ներքևի մասում հուշարձանի քարերը թափված են այժմ, բայց ըստ բովանդակության հնարավոր է որ թվական ունեցող այդ նախադասությունը լինի. քանի որ վերևի թվականը նախորդ արձանագրությանն է վերաբերում։ Լալայանը ունի միայն մերինի չափ.*

*Ալիշան, 216, Լալայան, Գ. 178*
*Լուսանկ. տախտ.* XXXIII, 128, 129, *և* XXXIV, 130

***344. ԲՆՈՒՆԻՍ. կոթող խաչքարի հյուսիսային շրջանակի վրա. 3 տ.***



ԶԿԱՐԱՊԵՏ | ՔԱՀԱՆԱՅ ՅԻ|ՇԵՑԷՔ ՔՍ։

*Լուսանկ. տախտ.* XXXIV, 131

*Սրա անմիջապես ներքևում 6 տող՝*

345. ԶԱԻՐՊԷ|Լ ՔԱՀԱՆԱՅ ԵՒ ԶԵ|ՂԲԱՅՐ ՆՈՐ|ԱՅ ԱՄԱՏՍ | ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ.

*Լուսանկ. տախտ.* XXXIV, 131



***346. Նույն կոթող խաչքարի պատվանդանի մի երեսպատման քարի վրա.***

ՄԻՆԱ. ԽԱԹՈԻՆ ԻՇԵՑԷՔ ՔՍ

*Լուսանկ. տախտ.* XXXIV, 132

347. Նույն կոթող-խաչքարի երեսպատման մի քար, օգտագործված որպես գերեզմանաքար, հուշարձանի հյուսիս-արևմտյան կողմում. վրան 3 տող.



ԶԳՐԳՈՐԻԿ | ՔԱՋ ՎԱՐԴՊԵՏ |
ՑԻՇԵՑԷՔ Ի Ք̅Ս. Ա̅Ծ̅Յ.

*Լուսանկ. տախտ.* XXXV, 133

348. ԲՆՈՒՆԻՍ. գյուղամիջի եկեղեցու հարավային պատին, արտաքուստ ագուցված խաչքարի վրա.



Թ̅Վ. ։ՊՁ։ ԾՆՈՂԱՑ ՁԱԽԱԿԱՑ.

349. ԲՆՈՒՆԻՍ. գյուղամիջի եկեղեցու հարավային պատին, արտաքուստ ագուցված խաչքարի վրա.



Թ̅Վ. ։ՊՁԱ։ ՋԱՐԱՋԻՋԱ, ՋԱՏԻՐՍ
. . . ՑԻՇԵՑԷՔ Ի Ք̅Ս.

350. ԲՆՈՒՆԻՍ. գերեզմանատուն. կոթող խաչքարի մոտ օրորոցաձև տապանաքարի վրա.



ԵՍ ՓԻՐՈՒՄՍ ԿԱՆԼԿՆՅԵՑԻ ԽԱՉՍ
ԷԼԽԱՆԻՍ Ի ԹԼՎԻՅՍ ։ՌԾԳ։

*Լուսանկ. տախտ.* XXXV, 134

## ԱՆԳԵՂԱԿՈԹ

Համաձայն Ստ. Օրբելյանի ցուցակների, Անգեղակոթը գտնվելիս է եղել Սյունիքի Աղախ գավառի մեջ և վճարել է Տաթևի վանքին 10 չափ հարկ, որով դասվում է միջակ մեծության գյուղերի շարքում։

Հետագայում գյուղը խիստ մեծացել է ու նրա հարկի չափը կազմել է 10,500 արասի։ 15-րդ դարի հիշատակարանների մեջ Անգեղակոթը կոչվում է գյուղաքաղաք։

Պարսից տիրապետության ժամանակ Անգեղակոթը մելիքանիստ գյուղ էր։ 1699 թ. Մելիք Շահնազարի մոտ, Անգեղակոթում, տեղի ունեցավ Իսրայել Օրիի կազմակերպած մելիքների հայտնի ժողովը, որը Իսրայել Օրիին և Մինաս Վարդապետ Տիգրանյանին լիազորություններ տվեց՝ մելիքների անունից բանակցություններ վարելու օտար պետությունների հետ Հայաստանի ազատագրության հարցի վերաբերյալ։